հարկս մաքաս, պատիւս, հնազանդութիւնս և այլն, մի լիցի հարկաւոր զի բացատրեցիս մի ըստ միոջէ պատճառն այսքան երջանկութեան վասն առնելոյ մեզ Օրէնս անխախտելիս, բայց այսքան որ ամենայն զոր ինչ որ 'ի վերայ մեր և 'ի երեսս աշխարհին մերոյ գործոց ձեռաց մերոց ելանելն և ծնանիլ կարէ վարձ նորայ զրեալ գտանի 'ի Օրէնս մեր 'ի ազգէն մերմէ, ուրեմն ամենայն ոք ազատապէս զոր ինչ կամի կարող է գործել եթէ բարի եթէ չար, և ընդունիլ պարտ է վարձն գործոյն ձեռաց իւրոյ ըստ Օրինաց պատիւ և պատիժ, սովաւ զսպի բնութիւնս մեր և ընթանայ առ 'ի գործ բարիս գիտելով մեր վճիռն ինքենէ հատեալ 'ի վերայ իւր ակն ընդ ական, և ատամն ընդ ատամն, վասն այսորիկ ոչ երբէք մխէ ձեռն իւր լրբաբար ընդ ակն և ընդ ատամն, քանզի բարեպէս գիտէ պտուղ լրբութեան վարուց և վարձ լրբաբար շարժմանց իւրոց զինչ է։

Բնականապէս գիտեմ, որ ընթերցօղն սորայ հասանիլն 'ի այս հատորիս կարի ձկտէ 'ի միտս իւր այսինքն մինթէ ազգ մի բոլոր 'ի երեսս աշխարհի միոյ լայնատարածի կարի հաւաքիլ 'ի մի խումբ լսել իրաւունս և կազմել Օրէնս և կամ ընդունիլ կամ հակառակիլ կարգադրութեանց, և կամ յետ ընդունելութեան ով իցէ, որ ընթանայցէ այս ամենայն առ 'ի գործ, վասն այդ